ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

Ռազմագերիների և գերեվարված քաղաքացիական անձանց մասին հրապարակումների և անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ

Ի լրումն նույն խնդրի կապակցությամբ Տեղեկատվական վեճերի խորհրդի կարծիքի

Դիտորդ մարմնի կազմը

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Ա. ՓԱՍՏԵՐ

1. 2021թ. հունվարի 11-ին ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին է դիմել Տեղեկատվական վեճերի խորհուրդը՝ ուսումնասիրելու վերջինիս 2021թ. հունվարի 11-ի կարծիքը, որը կայացվել է Ռազմագերիների և գերեվարված քաղաքացիական անձանց մասին հրապարակումների և անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ: ՏՎԽ-ն առաջարկել է քննարկել այն և դրա կապակցությամբ ներկայացնել փորձագիտական կարծիք լրագրողական էթիկայի տեսանկյունից:

2. ՏՎԽ կարծիքը մասնավորապես առնչվում է 2020թ. Ադրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի և Արցախի դեմ սանձազերծած 44-օրյա պատերազմի ընթացքում գերեվարված, անհետ կորած ու զոհված անձանց վերաբերյալ տարբեր հարթակներում՝ ներառյալ համացանցում հրապարակված բազմաթիվ լրատվական նյութերին, որոնցում պարբերաբար ներկայացվում են զոհվածների, գերեվարվածների և անհետ կորածների անձնական տվյալներ, այդ թվում՝ լուսանկարներ ու տեսապատկերներ:.

4. ՏՎԽ-ն եզրակացրել է, որ վերջին ամիսներին հայաստանյան լրատվամիջոցներում նման բազմաթիվ հրապարակումներ հաճախ տարածվում են ռազմագերիների, զոհերի անձնական տվյալների ու անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի անտեսմամբ, խախտվում են անձի արժանապատվության նկատմամբ հարգանքը, նրա ու նրա հարազատների հոգեկան անձեռնմխելիության իրավունքը և այլն:

Բ. ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

I. Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր

1. Ճշգրտություն և անկողմնակալություն

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

1.1. մինչև հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել և չխեղաթյուրել փաստերը, չհրապարակել ակնհայտ կեղծ տեղեկություններ,

1.5. ձգտել, որ հաղորդագրությունները, լուսանկարային, տեսագրված ու ձայնագրված նյութերը համապատասխանեն իրականությանը, վերնագրերը բխեն նյութի բովանդակությունից, չչարաշահվեն հանրային դեմքերի և սովորական մարդկանց անձնական տվյալների համընկնումները, մեջբերումները չօգտագործվեն համատեքստից դուրս:

2. Ազնվություն տեղեկությունների աղբյուրների հետ հարաբերություններում

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

2.5. չչարաշահել լրագրողների և լրատվամիջոցների հետ շփման փորձ չունեցող անձանց դյուրահավատությունը,

4. Հարգանք մարդկանց անձնական կյանքի և այլ իրավունքների նկատմամբ

Այս սկզբունքի պահպանումը նշանակում է, որ խմբագրությունն ու լրագրողը պարտավոր են՝

4.1. պաշտպանել մարդկանց մասնավոր կյանքի

անձեռնմխելիության իրավունքը, ներառյալ՝ հարգանքն անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի, սեփականության, առողջության և նամակագրության նկատմամբ,

4.2. այն դեպքում, երբ խոսքի ազատությունը հակասության մեջ է մտնում մարդու մյուս հիմնարար իրավունքների հետ, լրատվամիջոցն ինքնուրույն է վճռում, թե ինչին տալ նախապատվությունը, և պատասխանատվություն է կրում իր վճռի համար,

4.6. առողջական լուրջ խնդիրներ ունեցող, ինքնասպանություն գործած կամ այդպիսի փորձ կատարած անձանց, ինչպես նաև ողբերգություն կամ վիշտ տարած մարդկանց մասին տեղեկություններ հավաքելիս, հարցազրույց կամ լուսանկար հրապարակելիս, տեսա կամ ձայնանյութ հեռարձակելիս նրբանկատ լինել նրանց նկատմամբ:

II. **ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի Ուղեցույց՝ Պատերազմի, զինված բախումների և ներքին հակամարտությունների ժամանակ լրագրողների ու լրատվամիջոցների վարքի**

Բ. ԵՐԿԸՆՏՐԱՆՔՆԵՐ

4. Հրապարակե՞լ, արդյոք, զոհվածների մարմինների լուսանկարները կամ տեսանյութ այդ մասին: Սա ամենաբարդ երկընտրանքն է. հրապարակելը ցույց կտա պատերազմի և զինված հակամարտության սարսափները, սակայն կարող է նաև մարդկանց հոգեկան տառապանքներ պատճառել: Ամեն դեպքում, պետք է հրապարակելիս այնպես քողարկել դեմքերը, որ անձը չնույնականացվի, չէ՞ որ նպատակը սարսափնե՛րը ցույց տալն է և ոչ թե՝ կոնկրետ անձի մահը կամ խոշտանգված վիճակը:

Գ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը՝

Ամբողջությամբ ընդունելով

«Ռազմագերիների և գերեվարված քաղաքացիական անձանց մասին հրապարակումների և անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ» Տեղեկատվական վեճերի խորհրդի կարծիքը, այդուհանդերձ,

Հավելում է.

1. Անձնական տվյալների, այդ թվում լուսանկարների տարածումը կարող է թույլատրելի լինել, եթե անձի համաձայնությունը ստանալու անհնարինության պարագայում առկա է նրա ընտանիքի անդամների համաձայնությունը: Համանման դեպքերում անհրաժեշտ է սահմանափակվել այն տվյալների տարածումով, որոնք ընտանիքի կամ հարազատների անմիջական տրամադրության տակ են կամ ստացվել են պաշտոնական ոչ գաղտնի և ոչ թե այլ աղբյուրներից: Անհրաժեշտ է բացառել նաև տարածման վերաբերյալ ընտանիքի անդամների հակասական դիրքորոշումը: Ինչպես նա տարածումից առաջ համոզվել, որ ընտանիքի անդամները և հարազատները գիտակցում են անձնական տվյալների հանրայնացման հետ կապված ռիսկերը՝ շանտաժ, մեքենայություններ և այլ չարաշահումներ:

2.Խորհուրդ է տրվում նախկին կամ պահվող ռազմագերուն վերաբերող հրապարակման մեջ չգործածել գերեվարած կողմի տարածած որևէ լուսանկար, տեսանյութ, տեքստ կամ հղում, եթե նույնիսկ նախկին ռազմագերին կամ պահվող ռազմագերին կամ նրա հարազատները ֆորմալ առումով համաձայն են այդ բովանդակության հրապարակմանը. տուժած անձինք երբեմն բավականաչափ հստակ չեն գիտակցում սեփական հեռագնա շահերը և առանց մասնագետների հետ քննարկելու տալիս են իրենց համաձայնությունը: Այսինքն այս պարագայում տուժած անձի համաձայնությո՛ւնն էլ կարող է որոշիչ չլինել էթիկայի տեսանկյունից:

3. Թեպետ ռազմագերիների և գերեվարված անձանց տվյալները, այդ թվում՝ լուսանկարները չտարածելը հակասում է տեղեկությունները չկոծկելու և տեղեկատվության ամբողջականության էթիկական սկզբունքներին, այսուհանդերձ՝ տվյալ պարագայում անձնական տվյալների պաշտպանության և գերեվարված անձանց անվտանգության հանրային շահը գերակա է, մանավանդ եթե նկատի առնենք, որ հակառակորդը կարող է նաև դրանք օգտագործել քաղաքական և այլ մանիպուլյացիաների նպատակով:

4. Անհրաժեշտ է բարձրացնել այս հարցում ինչպես լրագրողների մասնագիտական-էթիկական պատասխանատվության, այնպես էլ հանրության մեդիագրագիտության մակարդակը:

Դիտորդ մարմինը կոչ է անում լրագրողներին և լրատվամիջոցներին՝ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում գերեվարվածների հարազատներին բացատրել անձնական տվյալների և դրանց գաղտնիության կարևորությունը, ինչպես նաև՝ դրանց հրապարակման դեպքում հնարավոր բոլոր հետևանքները:

Ընդունվել է 2021թ. հունվարի 29-ին,
ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետևյալ կազմով՝

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ, Վանաձորի «Լոռի» հեռուստաընկերության գործադիր տնօրեն

Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ, Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախագահ

Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, մամուլի փորձագետ

Արա ՂԱԶԱՐՅԱՆ, իրավաբան

Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ, Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ

Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ, Երևանի մամուլի ակումբի նախագահ

Նունե ՍԱՐԳՍՅԱՆ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն

Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 61-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում: